



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆՔԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՐՑԱՆԻ ՆԱԽԱԳԱՅ ԲԱԿՕ ՍԱՐԱԿԵԱՆ ԱՅՑԵԼԵՑ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամի հանգանակային արշավին՝ թելեթոնին ներկայ ըլլալու համար Լոս Անճելըսի իր այցելութեան առիթով, Արցախի Նախագահ Բակո Սահակեան Երեքշաբթի, 25 Նոյեմբերի յետմիջօրէին այցելութիւն մը տուաւ Ազգային Առաջնորդարան եւ ընդունուեցաւ Թեմիս ժողովականութեան ու կրթական համակարգի ներկայացուցիչներու կողմէ:

Յարգոյ Նախագահին կ'ընկերանային Արցախի Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Պարգեւ Արք. Մարտիրոսեան, Ուաշինկթընի մօտ Արցախի ներկայացուցիչ Վարդան Բարսեղեան եւ այլ պաշտօնատարներ: Նկատի ունենալով, որ Առաջնորդ Սրբազանը՝ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, յատուկ պարտականութեամբ Վատիկան կը գտնուէր, մաս կազմաւելու համար Կաթողիկէ եկեղեցւոյ քահանայապետ Ն.Ս. Պենետիկտոս ԺԶ. Պապին հետ Ն. Ս. Օ. Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի հանդիպումներուն, հիւրընկալումը գլխաւորեց Մեծի Տանն Կիլիկիոյ միաբանութեան երեց անդամներէն Բարձր. Տ. Եփրեմ Արք. Թապազեան: Անոր կողքին կը գտնուէին Ազգային Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Խաժակ Տիքիճեան, Թեմիս Կրօնական ժողովի ու Ազգային Վարչութեան անդամներ, Ազգային վարժարաններու Խնամակալ Մարմինի ներկայացուցիչը, Ազգ. Վ. եւ Ա. Շամլեան վարժարանի տնօրէնը եւ Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինի անդամներ: Ներկայ էր նաեւ յունահայ գաղութի ազգայիններէն Տիար Սիիրան Քիւրտօղլեան, որ այս օրերուն Լոս Անճելըս կը գտնուի:

Ողջունելով յարգելի հիւրերը, Տ. Եփրեմ Սրբազան Նախ հրաւիրեց Հոգշ. Տ. Պարթեւ Կրդ. Կիլիմեանը, որպէսզի ընթերցէ Առաջնորդ Սրբազանին ողջոյնի խօսքը: Իր գրաւոր պատգամին մէջ, Առաջնորդ Սրբազանը կ'ողջունէր յարգելի հիւրերը, որոնք Լոս Անճելըս եկած են «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի թելեթոնին հայրենաշէն առաքելութեամբ ու կը վստահեցներ, որ ողջ հայութիւնը կը կանգնի Արցախի կողքին, անոր ապահովութեան ու վերականգնումի գործին մէջ: «Հայրենաշինութեան ի խնդիր այս ու նմանօրինակ Նախաձեռնութիւններ մեզ կ'առաջնորդեն նորանոր նուաճումներու: Տարուէ տարի, մեր ժողովուրդին հայրենի ու արտերկրի մասնիկները աւելի խորունկ, աւելի

գործնական կերպով կ'անդրադառնան, որ տերն են միեւնոյն անցեալին, միեւնոյն պայքարին եւ միացեալ Հայաստանի տեսլականին: Անոնք խորապէս կ'ըմբռնեն, որ Հայաստանի, Արցախի ու հայկական մէն մի օճախի տիրութիւնն ու ծառայութիւնը, բարգաւաճման գործը նախ եւ առաջ հայութեան պարտականութիւնն ու իրաւունքն է, միասնաբար՝ ձեռք ձեռքի տուած, համերաշխօրէն ու փոխադարձ հասկացողութեամբ պիտի լծուին մեր այսօրն ու ապագան կերտելու գործին», կ'ընդգծէր Առաջնորդ Սրբազանը:

Եփրեմ Սրբազանը իր կարգին ողջունեց հիւր նախագահն ու Արցախի Թեմի Առաջնորդ իր հոգեւոր եղբայրը, գոհունակութիւն արտայայտեց, որ Արցախի նախագահը ահաւասիկ երկրորդ տարին ըլլալով կ'այցելէ Ազգային Առաջնորդարան: Ան վերահաստատեց, որ հայութիւնը, իր սփիւռքեան թելով, զօրավիգ է Արցախին ու պատրաստակամ՝ շարունակելու իր աջակցութիւնն ու զօրակցութիւնը՝ անոր վերականգնումին ու անկախ գոյատեւման նպաստող բոլոր քայլերուն: Ան անձնական վկայութեամբ հաստատեց, որ Հայաստան Համահայկական Հիմնադրամին կազմակերպած թելեթոններուն ճամբով գոյացած աջակցութիւնը կը ծառայէ կրթական հաստատութեանց, հիւանդանոցներու, ճամբաներու, կամուրջներու եւ այլ կենսական կառոյցներու շինութեան, ու մաղթեց, որ այս աշխատանքները շարունակուին նոյն թափով, Արցախի անկախութիւնն ու անվտանգութիւնը մնան հաստատուն:

Ողջոյնի խօսք արտասանեցին նաեւ Տեարք Խաժակ Տիգրան, Ազգ. Վարչութեան փոխ ատենապետ Տիար Կարօ Աւագեան եւ Կոնսական Ժողովի ատենապետ Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան: Տիար Տիգրան նկատել տուաւ, որ մօտաւորապէս երկու շաբաթ ետք, Անթիլիասի մէջ տեղի պիտի ունենայ Ազգ. Ընդհանուր Ժողովը, որուն պիտի մասնակցի ինք, եւ ուր հանգամանօրէն պիտի քննարկուին նաեւ Հայաստանի ու Արցախի հետ գործակցութեան հեռանկարները, հայրենակերտումի միացեալ աշխատանքները: Տիար Կ. Աւագեան Ազգ. Վարչութեան անունով բարի կեցութիւն մաղթեց հիւրերուն ու մասնաւորաբար վեր առաւ Ազգ. Առաջնորդարանի սերնդակերտ գործը, որ կը կատարուի Ազգային վարժարաններուն ճամբով ու Խնամակալ Մարմինին վերահսկողութեամբ: Ան յոյս յայտնեց, որ այս տարի եւս, թելեթոնը ի մի բերէ հայութեան բոլոր զաւակներուն նուիրաբերումը, իսկ Արցախի ղեկավարութիւնը անհրաժեշտ յենարանը ունենայ հողին ու ժողովուրդին պահպանման: Հայր Միւռն Արցախի պետական ու եկեղեցական առաջնորդներուն ներկայութիւնը նկատեց իբրեւ Արցախի քաջարի ժողովուրդին ներկայութեան փաստ, ու յոյս յայտնեց, որ հայութեան նուիրաբերումը ըլլայ հայրենիքին հանդէպ ժողովուրդի հաւատարմութեան արտայայտութիւն:

Արցախի Առաջնորդ Տ. Պարգեւ Սրբազան շնորհակալութեան ու գոհունակութեան արտայայտութիւն ունեցաւ: Ան յատկապէս գոհունակութիւն արտայայտեց, որ կը գտնուի ազգային այս յարկին տակ, Արցախը կը վայելէ ազգի զօրակցութիւնը: Յիշեցնելով, որ 20 տարի առաջ, ազատագրումի ձայնը հնչած էր Արցախէն, ինչպէս որ անելի քան դար մը առաջ նման ձայն բարձրացած էր Երզրումէն, Պարգեւ Սրբազանը նկատել տուաւ, որ Արցախեան Շարժումը յաղթանակով պսակուեցաւ՝ շնորհիւ

հայութեան միասնութեան: Ան ընդգծեց, որ հայութիւնը իր երազանքներուն՝ հողահաւաքի տեսլականին իրականացման համար ալ պէտք ունի նոյն միասնութեան ու համոզում յայտնեց, որ Արցախի շուրջ գոյացած միասնութիւնը հիմք ծառայէ յաջորդ իրագործումներուն. «Պէտք է պահպանենք ու զօրացնենք Արցախը, որպէսզի Աստուած տեսնէ որ մենք կարող ենք փոքր պարտականութեանց մէջ հաւատարիմ ըլլալու, ու Ան մեզի պիտի շնորհէ մեծ իրագործումներու առիթը, երբ ապացուցենք, որ ունինք այդ հաւատարմութիւնը», եզրափակեց ան:

Պաշտօնական հանդիպումին եզրափակիչ խօսքը արտասանեց նախագահ Բակօ Սահակեան: Ան շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդ Սրբազանին խօսքերուն ու Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան զօրակցական կեցուածքին համար, ապա յիշեցուց, որ անցեալ տարի Լոս Անճելըս իր այցելութեան առիթով, արտայայտուած էր արցախեան ծրագիրներու մասին, իսկ այժմ, առիթ կ'ունենայ, տարբեր միաւորներու հետ հանդիպումներու ընթացքին՝ խորհրդակցելու ծրագիրներու իրականացման մասին, կ'ուզէ ունենալ հայութեան տեսակետն ու ներդրումը այդ իրականացումներուն համար, այն համոզումով, որ Արցախի մէջ ունինք գոյամարտ, ու ամէն հայ մասնակից է անոր: Ան յայտնեց, որ Արցախի դիմաց կան երկու գլխաւոր առաջադրանք՝ նախ, դարմանել վերքերը, ապա աշխատանքի լծուիլ զարգացումի համար: Ան վստահութիւն յայտնեց, որ Արցախը պիտի յառաջդիմէ, որովհետեւ իր կողքին ունի հայութիւնը: Համոզում յայտնելով, որ հայութեան ձեռքերը իրարու միացած պիտի մնան հայրենիքի պաշտպանութեան ու վերականգնումի գործին մէջ, ան եզրափակեց կոչ ուղղելով, ու սփիւռքի զաւակներ յաճախ այցելեն Արցախ, զայն նկատելով իրենց տունը:

Յարգելի հիւրերուն յանձնուեցան յուշանուէրներ: Նշենք, որ Տիար Սիիրան Քիրտօղլեան եւս նախագահ Բ. Սահակեանի նուիրեց Արցախի մասին գեղատիպ գիրք մը, ինչպէս նաեւ դրուատիքով արտայայտուեցաւ հայութեան ազատագրական նորագոյն պատմութեան մէջ Արցախի առաջանորդողի դերին, որ ունի դարերու փայլուն պատմութիւն:

Հանդիպումի պաշտօնական բաժինէն ետք, տեղի ունեցաւ պատշաճ հիւրասիրութիւն, զոր կազմակերպած էր Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինը:

PRESIDENT BAKO SAHAKYAN VISITS THE PRELACY

On the afternoon of Tuesday, November 25th, President of Nagorno-Karabakh His Excellency Bako Sahakyan paid an official visit to the Prelacy. The President was accompanied by H.E. Archbishop Barkev Mardirossian, Prelate of Artsakh, Nagorno-Karabakh representative in Washington Mr. Vartan Barseghyan, and officials. Given that H.E. Archbishop Moushegh Mardirossian is currently at the Vatican as part of the delegation of H.H. Catholicos Aram I for a visit with H.H. Pope Benedict XVI, the President and officials were welcomed to the Prelacy by H.E. Archbishop Yeprem Tabakian, Central Executive

member Mr. Khajag Dikijian, Religious and Executive Council members, Board of Regents members and principals, and Ladies Auxiliary members.

The visit began with Archbishop Tabakian inviting Very Rev. Fr. Barthev Gulumian to deliver the Prelate's remarks. In his written statement, the Prelate welcomed the guests who are in Los Angeles ahead of the Armenia Fund Telethon, and reaffirmed the support of our community to the progress of Artsakh. Archbishop Tabakian then welcomed the President and guests, and reiterated that the Diaspora is committed to the development and advancement of Artsakh.

In his welcoming remarks, Mr. Dikijian stated that collaboration with Armenia and Artsakh is on the agenda of the upcoming General Assembly of the Catholicosate of Cilicia in which he will participate. Remarks were also offered by Very Rev. Fr. Muron Aznikian and Executive Council Vice-Chair Mr. Garo Avakian.

Archbishop Mardirossian conveyed his thanks and appreciation for the welcome and for the expressions of support. He asserted that the liberation of Artsakh two decades ago was due to the collective support of all Armenians, stating that the same is needed for the successful realization of all future endeavors. He concluded that we must defend and strengthen Artsakh and prove that we are faithful in our responsibilities so that God will grant us even greater opportunities.

Concluding remarks were offered by President Sahakyan. He began by expressing thanks for the Prelate's remarks and for the staunch support of the Catholicosate of Cilicia. He stated that during his visit to the Prelacy last year, he had the chance to report on anticipated projects and now had the opportunity to report on the completion of those projects. He stated that Artsakh is still faced with the healing of old wounds and subsequently the general advancement of the country, and expressed confidence that the country will overcome these challenges because of the backing of all Armenians. He concluded by urging all Armenians to remain united in the safeguarding and rebuilding of our homeland and to visit Artsakh as it is their home as well.

At the conclusion of the official visit, the President and guests were presented with mementos. Mr. Mihran Keurdoghlian, a member of the Armenian community in Greece who is currently in Los Angeles, also presented the President with a memento. A reception organized by the Ladies Auxiliary followed.